1001

206·5
Z-32

1910

ՀԱՇԻՒ

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ Ս. ԽԱՉ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

1909 թ.

ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

206.5
Z-32

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆ
Տպարան Սերովբէ Աւագեանի
1910 թ.

2010

Ս-5 ԱՅ
206.5
Հ-32
370
2076-ՀԿ
11443
Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ՊՐԱԴԱՐԱՆ
Publicznaja Biblioteka
7/XI 1922
Именная, Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

Նոր-Նախիջևանի ս. Խաչ վանքի Վանական Կառավարութիւնը՝ բոլորելով իւր գործունէութեան երկրորդ տարեշրջանը, Կանոնադրութեան 11-րդ յօդուածի համաձայն՝ պատիւ ունի ներկայացնելու պատգամաւորական ընդհանուր ժողովի քննութեանն ու հաստատութեանը 1909 թուի եկամուտքի ու գործունէութեան հաշիւը, այլ և Կանոնադրութեան 10-րդ յօդուածի համաձայն՝ առաջիկայ 1910 թուի եկամուտքի մօտաւոր նախահաշիւը։

1004
1535
2001

ՄՈՒՏՔ ՀԱ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Մնացորդ առ 1-ն յունուարի 1909 թուի ԶՈՐՍ ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՈՒԹՍՈՒՆ ԵՐԵՔ ՐՈՒԲԼԻ ուԹսուն հինգ կոպէկ, որ կազմուած է հետեւեալ գումարներից.				
	ա. Պահեստի գումար - - - -	932	37		
	բ. Հիմնական նորոգութեան ֆոնդ - -	932	37		
	գ. Ծախսելի գումար - - - -	2630	27		
	դ. Միք. Նալբանդեանի և Ռ. Պատկանեանի արձանների նորոգութեան համար յատկացուած անձեռնմխելի գումար -	488	84	4983	85
	Հաշուետուութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը ունեցել է մուտք՝				
1	Վարելահողերի տարեկան վարձ - -	9151	87		
2	Քարահանքի տարեկան վարձ - - -	705	—		
3	Բանջարանոցի տարեկան վարձ - -	487	50		
4	Պարտէզի վարձ - - - - -	600			
5	Պարտէզի կապալառու Մ. Քայալեանցից 'ի հաշիւ պարքի - - -	100			
6	Ամարանոցների վարձ - - - -	524	90		
7	1908 թուից ամարանոցի վարձադնի մնացորդ - - - - -	70			
8	Մոմավաճառումից - - - -	681	61		
9	Եկեղեցական դանձանակ - - -	24	31		
10	Երգիչների դանձանակ - - - -	12	30		
11	Այլ և այլ նուէրներ (լուսադին, պատարագ և այլն - - - - -	79	95		
12	Այլ և այլք (մատաղի մորթիների, անասունների, կաթնեղէնի, փայտեղէնի, ածուխի, սառոյցի և այլ իրերի վաճառումից) - - - - -	207	40		
13	Քարերի վաճառումից - - - -	246	10	12890	94
	Փոխանցելի	—	—	17874	79

ԾԻՒ 09 թ. ԵԼՔ

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Հաշուետուութեանս տարեշրջանում ս. Խաչ վանքը ունեցել է ելք՝				
1	Վանքի պաշտօնեաների ռոճիկներ՝ - -				
	Վանահօրը (1909 թ. տարեկան ռոճիկ) -	600			
	Վանահօրը՝ անցեալ տարիներից տպառիկ մնացած ռոճիկը - - - -	900			
	Տնտես-տիրացուին - - - -	455			
2	Վանքի երգիչներին - - - -	80	35	2035	35
	Վանքի ծառաների ռոճիկներ՝ - -				
	Կառապանին - - - - -	138			
	Խոհարարուհուն - - - -	144			
	Բակապանին - - - - -	131			
	Գիշերապահին - - - - -	159	50		
	Պարտիզպանին - - - - -	280			
	Խոռուճուն (մէկ ու կէս ամսուայ համար) -	68			
	Քիստեան կոչուած ամարանոցային շէնքերի պահապանին - - - -	60			
	Վանական կառավարութեան սպասաւորին -	40			
	Պարտէզի ժամանակաւոր պահապանին -	20			
	Տօների առթիւ ծառաներին նուէրներ -	26	60	1067	10
3	Եկեղեցու և այլ շէնքերի նորոգութեան ու պահպանութեան ծախք - - -			1715	51
4	Մոմի և խնկի - - - - -	264			
5	Կալուածական ծախքեր (հողերի նոր պլան կազմելու և այլն) - - -	384	75		
6	Պարտէզի նորոգութեան, պարտիզպանական գործիքների, բակի մշակութեան ու մաքրութեան ծախք - - -	641	02		
7	Վառելիքի և լուսաւորութեան - -	270	68		
8	Տարեկան սնունդ վանահօր, պաշտօնեաների, ծառաների և հիւրերի ծախք -	690	16	2250	61
	Փոխանցելի - -	—	—	7068	57

ՀԱ

ՄՈՒՏՔ 19

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Փոխանցեալ - -			17874	79
	Կշիռ -			17874	79

Նախագահ Վանական կառավարութեան՝
Վահան վարդապետ Տէր-Գրիգորեանց
Անդամ-Գործավար՝ Գ. սարկ. Զէօրէքչեան

Մայիսի 21-ին 1910 թուին մենք ի ներքոյ ստորագրեալ հաները և 1909 թուի տարեկան հաշիւը և գտանք՝ հաշուամատեանները համաձայն պայմանագրերի, ծախսուած գումարները ունին իրանց Առ 1-ն յունուարի 1910 թուի մնացորդն է ութը հազար երեք հարը գտնուում է Ռոստովի և Նախիջևանի բանկային հաստատութիւն-

Հաշուատեսներ | Յովակիմ Խամբուրեան
Մանուկ Ալլահվերդեան

ԾԻՒ

0 9 թ. **ԵԼՔ**

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	Փոխանցեալ - -	7068	57		
9	Սեղանի և խոհանոցի սարքի - -	42	84		
10	Կարասիքի - - - - -	163	46		
11	Սառոյցի (Վանքի և պարտէզի համար)	93	—		
12	Կառքերի կարկատանի և ձիերի պայտելու	51	67		
13	Անասունների սնունդ (խոտ, վարսակ և թեփ)	575	13		
14	Այլ և այլք (ժապաւինեալ մատեաններ, էլէքտրական զանգեր, լամպի ապակիներ, հեռագիրներ, փոստ, օճառ և այլն)	129	41		
15	Ազգիս Վեհափառ Հայրապետի ընդունելութեան ծախք - - - -	104	86		
16	Նպաստ Մաստարեցի Գարեգին Յարութիւնեանին (Հայրապետական կարգադրութեամբ) - - - - -	52	50		
17	Նոր-Նախիջևանի թեմական դպրանոցին նպաստ - - - - -	1200		9481	44
18	Մնացորդ առ 1-ն յունուարի 1910 թ. -			8393	35
	Կշիռ -			17874	79

Անդամք Վ. Կ. | Յովհաննէս Շապոշնիկեան
Արգար Դերեջանեան
Յովակիմ Սագիրեան

շուատեսներս քննեցինք Վանական կառավարութեան հաշուամատեանվարած են ճիշտ և կանոնաւոր կերպով, բոլոր մուտքերը եղած են ապացուցագրերը կամ ստորագրութիւն ժապաւինեալ մատեանի մէջ։ Բիւր իննսուն երեք բուբլի (8393 ր. 35 կ.) և երեսուն հինգ կոպէկ, ների մէջ։

ՆԱԽԱ

ՄՈՒՏՔ **19**

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	1910 թուի տարեշրջանում ս. Խաչ վանքը մօտաւորապէս մուտք պիտի ունենայ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՎԵՑ ՀԱՐԻՒՐ ՈՒԹՍՈՒՆ ՎԵՑ ՌՈՒԲԼԻ քառասուն վեց կոպէկ հետեւեալ աղբիւրներից.				
1	1909 թ. վարձու տուած 264 դես. 594 ք. ս. վարելահողի երկրորդ կիսամեակի վարձը (մինչև 1910 թ. սեպտեմբերի 1-ն է) - - - - -			3763	46
2	1910 թ. վարձու տրուելիք 148 դես. վարելահողի առաջին կիսամեակի վարձը (այս սեպտեմբերի 1-ից մինչև տարեվերջը) - - - - -			3848	
3	Քարահանքի տարեկան վարձը (պայմանաժամը մայիսի 20-ն է) - - -			705	
4	Բժիշկ Բաղ. Տրապիզոնցեանից 145 դես. 14 ք. ս. այս տարուայ արօտատեղիի վարձը (պայմանաժամը սեպտեմբերի 1-ն է) - - - - -			980	
5	Կապալառու Ռամից 22 դես. տնկարանի տարեկան վարձը - - -			770	
6	Բանջարանոցի տարեկան վարձը (պայմանաժամը տարուոյս հոկտ. 15-ն է) -			475	
7	Պարտէզի այս տարուայ վարձը - -			600	
8	Պարտէզի կապալառու Մ. Քայալեանից ի հաշիւ հին պարտքի - - -			225	
9	Ամարանոցների վարձ - - - -			550	
10	Մոմավաճառումից - - - -			600	
11	Եկեղեցու զանձանակ և նուէրներ - -			50	
12	Այլ և այլք - - - - -			120	
	Ընդամենը - -			13686	46

Նախագահ Վան. կառավարութեան՝
Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան
Անդամ-Գործավար Գ. սարկ. Զէօրէքչեան

ՀԱՅԻՒ

10 թ. **ԵԼՔ**

		Ր.	Կ.	Ր.	Կ.
	1910 թ. ընթացքում վանքը ելք պիտի ունենայ ՏԱՍՆ և ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ԻՆԸ ՀԱՐԻՒՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԻՆԸ ՐՈՒԲԼԻ, որ պիտի ծախսուի հետեւեալ կերպով.—				
1	Եկեղեցու պէտքերի և ներքին վերանորոգութեան ծախք - - - -			1000	
2	Մոմի և խնկի - - - - -			264	
3	Շէնքերի ապահովագրութեան - -			100	
4	Վանահօր ռոճիկ - - - - -			600	
5	Տնտես-տիրացուի ռոճիկ - - -			455	
6	Պարտիզպանի ռոճիկ - - - -			360	
7	Ծառաների ռոճիկ և նուէրներ - -			710	
8	Երգիչների ծախք - - - -			100	
9	Պարտէզի նորոգութեան և ծաղկանոցների ու բակի մշակութեան ծախք - -			800	
10	Վառելիքի և լուսաւորութեան - -			280	
11	Տարեկան սնունդ վանքի ամենատեսակ ծառայողների և հիւրերի ծախք - -			690	
12	Սառույցի - - - - - -			85	
13	Դրոշի և կարկատանների - - -			100	
14	Անասունների սնունդ - - - -			575	
15	Կարասիք և սեղանի ու խոհանոցի սարք -			100	
16	Այլ և այլք - - - - -			130	
17	Տեղւոյս թեմական դպրանոցին նպաստ -			1500	
18	Աղբիւրի ծախք - - - - -			1000	
19	Ամարանոցային շէնքերի նորոգութեան համար - - - - - -			2500	
20	Հեռախօսի - - - - -			600	
21	Աղբիւրի ջուրը վեր հանելու համար այս տարուայ ծախք - - - -			4000	
	Ընդամենը	—	—	15949	—

Անդամներ Վ. Կ. | Յովհան. Շապոշնիկեան
Արգար Դերիջանեան
Յովակիմ Սազիրեան

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Վանական Կառավարութիւնը՝ ներկայացնելով Ծխական-Պատգամաւորական Ընդհանուր Ժողովիդ 1909 թուի հաշիւը և 1910 թուի նախահաշիւը, կարևոր է համարում յարակցել նոցա նաև սոյն տեղեկագիրը իբրև պարզաբանութիւն իւր գործունէութեան և իբրև բացատրութիւն նախահաշուի մի քանի յօդուածների։

1. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ 1909 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ.

Վանական Կառավարութեան էական գործունէութիւնը, ինչպէս և կանոնադրութեան ա. յօդուածի մէջ շեշտուած է, պիտի լինի—ա) կառավարել վանքի կայքն ու գոյքը և բ) հոգ տանել վանքի բարեկարգութեան և նորա կալուածների արդիւնաւորութեան վերայ։ Այս իսկ նպատակով Վանական Կառավարութիւնը 1909 թուի ընթացքում ունեցել է 14 նիստ, ուր՝ բացի վանքի եկամտից մատեանի ամսական հաշուաքննութիւնից, խորհրդածութեան առարկայ են դարձել վանքի կալուածների շահագործութեան վերաբերեալ հարցեր և արծարծուել են վանքի ընդհանուր բարենորոգման և եկամուտի նոր աղբիւրներ ստեղծելու խնդիրներ։

Վանական Կառավարութեան գործունէութիւնը պարզելու համար թուենք մի առ մի վանքի եկամտի բոլոր աղբիւրները և նոցա շահագործութեան եղանակը։ Վանքի եկամտի գլխաւոր աղբիւրը կազմում է հողը, որ շահագործւում է զանազան կերպ. ա) *իբրև վարելահող*—Վ. Կ.՝ անցեալ տարուայ նման, այս տարի ևս հողերի արտակարգ գները 'ի նկատի առնելով՝ հետևած չէ երկդաշտեան տնտեսութեան (двухпольное хозяйство) եղանակին, այլ աճրդի է դրել ⅔-ը, և այս հաշուով վարելու տրուած են հետևեալ 25 վանդակները. №№ 1—17, 21—25 և 31—33, ընդամենը 264 դ. 594 ք. սաժէն. դեսեատինը՝ միջին հաշուով, 28 ռ. 48 կոպէկով։ բ) *իբրև արօտատեղի*—Վանքի անվար մնացած հողերը (բուռեան), Վ. Կ. անցեալ տարուայ որոշման համաձայն, սառնց աճրդի ենոյն վարձադնով (7 ռուբլով) տրուած են նախկին կապալառու բժիշկ Բաղ. Տրապիզոնցեանին՝ անպայման տաւար քալցնելու համար միայն, և են հետևեալ 20 վանդակները. №№ 18—20, 26—30 և 34—45, ընդամենը 145 դես. 14 ք. սաժէն։ գ) *իբրև տնկարան*—Վանքի հողերից 22 դեսեատինը, Վ. Կ. անցեալ տարուայ պայմանի զօրութեամբ՝ տրուած է վաճառական Ռամին որ դարձրել է տնկարան և վճարում է դեսեատինին 35 ռուբլի։ դ) *իբրև բանջարանոց*—Վանքի եկամտի աղբիւրներից է նաև բանջարանոցը, որ բռնում է 10 դեսեատին տարածութիւն և շահագործւում է նախկին տարիների եղանակով։ Բայց պէտք է ասել որ սորա եկամուտը հնարաւոր է աւելացնել, եթէ վանքը չորացնէ եղեգնուտը, որ համարեա բանջարանոցի կէսն է բռնում։ Սակայն Վ. Կ. առժամանակ յետաձգել է այս գործը միջոցների սղութեան պատճառով, քանի որ՝ ինչպէս նախահաշիւը ցոյց է տալիս, ծրագրել է մեծամեծ ծախքեր պահանջող, բայց աւելի կարևոր և էական գործերի ձեռնարկել։

ե) Բացի հողերից՝ վանքի եկամտի աղբիւր ներկայանում է պարտէզը, որ՝ անցեալ տարուայ պայմանի զօրութեամբ, այս տարի ևս մնում է նախկին կապալառու Մարգար Քայալեանի ձեռքը, քանի որ նա պայմանը անթերի կատարել է, ինչպէս անցեալ տարուայ վարձը կանխիկ վճարել է ու 225 ռուբլի էլ իւր պարտքից զեղչել է, նոյնպէս և այս տարի արդէն կանխիկ վճարել է տարեկան վարձը, իսկ զեղչելի 225 ռուբլու համար գրաւականի դեր է կատարում կնոջ ստորագրութիւնը պայմանաթղթի տակ։

Վանական Կառավարութիւնը՝ ներկայ հանգամանքներում, պարտէզը այլ կերպ աւելի օգտաւէտ շահագործելու հնար չի գտնում, քանի որ դեռևս վանքի մէջ ստեղծուած չեն այնպիսի պայմաններ, որոնք ծրագրուած են ապագայի համար և որոնք կարող են բանալ աւելի օգտաւէտ շահագործութեան ճանապարհ։

Վ. Կ. նայել է պարտէզի վերայ ոչ միայն իբրև եկամտի աղբիւրի վերայ, այլ և միշտ իւր առանձին հոգատարութեան առարկայ է դարձրել նորա պահպանութեան և նորոգութեան խնդիրը։ Այս նպատակով նա վարձել է յատուկ պարտիզպան, դեռ անցեալ տարի ծրագրել էր, ինչպէս նախահաշուից կարելի էր տեսնել՝ տնկել այն մասը, որ համարեա դատարկ էր։ Բայց դժբաղդաբար անցեալ տարի զանազան պատճառներով անկարելի եղաւ Վ. Կ. վճիռը իրականացնել, այլ այս գարնանը կատարուեցաւ, այն է պարտեզի հարաւ—արևմտեան մեծ քառանկիւնին, որ համարեա բոլորովին դատարկ էր՝ նոր ծառեր տնկուեցան. ծառերի ընտրութիւնը և տնկուածքի պլանը կատարուել է Ռամի կառավարչի ցուցմամբ, որ նայել է պարտէզի վերայ, իբրև զբօսավայրի վերայ։

զ) Վանքի եկամտի աղբիւր հանդիսանում են նաև ամարանոցները—Վ. Կ. 'ի նկատի առնելով այն հանգամանքը, որ իւր ծրագրի մէջ կայ ապագայում ամարանոցների թիւը շատացնել՝ փորձեց իւր ունեցած ամարանոցային շէնքերը կարգի դնել, ամարանոց եկողների համար յարմա-

րութիւններ ստեղծել և՝ 'ի միջի այլոց, դպրոցական մեծ շէնքն ևս, որ աննպատակ կեցել է՝ ամարանոցների վերածել։ Այս նպատակով նա յատուկ ճարտարապետ հրաւիրեց և պլան կազմել տուաւ ու յանձնեց կապալառուների, որ մանրամասն նախահաշիւ ներկայացնեն կազմած պլանի համաձայն։ Կապալառուներից միայն մէկը ներկայացրեց ընդարձակ և մանրամասն նախահաշիւ, որ Վ. Կ. նիստերից մէկում քննուեցաւ, և որի հետևանքն այն եղաւ, որ Վ. Կ. հրաժարուեցաւ իւր ծրագրից, քանի որ նա ի նկատի ունէր միայն մօտաւորապէս 3–4 հազար ռուբլի ծախսել մօտ 1000 ռուբլի եկամուտ ստանալու դիտաւորութեամբ, այն ինչ ըստ նախահաշուի 10 և աւելի հազար պէտք էր ծախսել։ Սորա փոխարէն նա որոշեց նորոգել եկեղեցու հիւսիսային կողմը գտնուած բակի շէնքը՝ վերածելով երեք ամարանոցի և տալով իւրաքանչիւրին առանձին յարմարութիւններ, որ պիտի նստի վանքին 2500 ռուբլի, հաշուելով սրա մէջ և այն ծախսերը, որ առանց այն էլ անպատճառ պահանջւում էր՝ ինչպէս են յատակների հարթելն ու ներկելը և արևմտեան պատին նոր յենապատ կարգնելը՝ փուլ գալու վտանգի առաջն առնելու համար։

Է) Վանքի եկամտի աղբիւրներից մէկն էլ մոմավաճառութիւնն է, որի քանակը վերև բերուած հաշիւը ցոյց է տալիս, բայց որը շատ մեծանալ կարող է, եթէ վանքի մէջ ծրագրուած բարեփոխութիւնները մտնեն։

Գալով նախահաշուին՝ Վ. Կ. անհրաժեշտ է համարում նորա մի քանի կէտերը որոնք մեծ ծախքերի հետ են կապուած՝ պարզաբանել։ Նախահաշուի մէջ աչքի է ընկնում յատկապէս աղբիւրի ջուրը վեր հանելու ծրագիրը, որ պիտի արժենայ ըստ նախահաշուի առնուազը 18900 ռ. 42 կոպ.։ Նախահաշիւը կազմել է յայտնի ինժեներ—տեխնիկ Պ. Ֆ. Գորբաչովը՝ անձամբ տեղագրութիւնը ուսումնասիրելուց և Վ. Կ. անդամների հետ խորհրդածութիւն ունենալուց յետոյ, որի տուած մանրամասն նախահաշիւը տպուած է այս հաշուի հետ, որպէսզի Մեծ. Պատգամաւորները հնարաւորութիւն ունենան նախապէս ծանօթանալու խնդրի հետ։

Այս ձեռնարկութեան նկատմամբ՝ նախ կարևոր է լուսաբանել այն հարցը՝ թէ ինչո՞ւ Վ. Կ. ձեռնարկում է մի այսպիսի մեծածախք գործ։ Այս հարցը Վ. Կ. մի քանի նիստերի խորհրդածութեան նիւթ դառնալուց յետոյ՝ 'ի վերջոյ կարևոր է ճանաչուել և որոշուել նախահաշուի մէջ մտցնել ու Պատգամաւորական ժողովին առաջարկել հետևեալ պատճառներով. ա) Կարևոր է նա պարտէզի պահպանութեան համար. եթէ պարտէզը տարէցտարի անպէտքանում է՝ պատճառը ոչ թէ նորա ծերութիւնն է, այլ ամառուայ չորային ամիսներում ջրի պակասութիւնը։ Ջրի այս պահանջը անհրաժեշտ է դառնում մանաւանդ, երբ պարտէզի նորացման խնդիր է առաջ գալիս՝ ինչպէս օրինակ ներկայումս. որքա՞ն դիւրին պիտի լինէր վանքին պարտէզի նորատունկ մասը մեծացնել, եթէ նա հնարաւորութիւն ունենար ջրելու այն նորատունկ ծառերը, որոնք այս գարնանը տնկուած են պարտէզում՝ մեծ տարածութեան վերայ, և որքա՞ն նեղութիւն պիտի կրէ վանքը այժմ ջրելու յարմարութիւն չունենալու պատճառով, որպէսզի նորատունկ պարտէզը չորանալու վտանգից զերծ պահել կարողանայ։ բ) Վ. Կ. 'ի նկատի առնելով ս. Խաչի առողջարար օդն ու ջուրը, որոնցով նա ամարանոցի անուն է վաստակել՝ կամենում է ամարանոցային կեանքը այնտեղ աւելի ևս զարգացնել՝ շինելով նոր յարմարաւոր ամարանոցներ, կամ միջոց տալով ցանկացողներին իրենց ծախքով, ի հարկէ վանքի համար որոշ ձեռնտու պայմաններով՝ ամարանոցային շէնքեր կառուցանել։ Բայց ամարանոցներ առանց սեփական պարտէզի անկարելի է պատկերացնել, իսկ պարտէզ առաջ բերել առանց ջրի անհնար է։ Ամարանոցների կառուցման ծրագիրը կատարւում է վանքի համար եկամտի նոր աղբիւր ստեղծելու նպատակով. եթէ այս ծրագիրը իրականանայ, այն ժամանակ վանքի պարտէզը այլ բնաւորութիւն կստանայ, ինչպէս և նորա եկամուտը անհամեմատ կաճի։ Եւ վերջապէս գ) Ջուրը ոչ միայն վանքում ամարանոցային կեանքի զարգացման ու ընդլայնման կնպաստէ, այլ և՝ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նա մեծ յարմարութիւններ կստեղծէ թէ՛ վանքի և նորա բակի ամարանոցների, և թէ՛ գիւղի և նորա մէջ եղած ամարանոցների համար։

Այս շօշափելի պատճառներից բացի՝ կարելի է նաև 'ի նկատի ունենալ, որ ջրի պատճառով կստեղծուին շատ ուրիշ պայմաններ, որ այժմ հնարաւոր չէ նախատեսել, որոնք կարող են շահաւէտ լինել ինչպէս վանքին, նոյնպէս և հասարակութեան. այսպէս օրինակ կարելի կլինի սանատորիա հիմնել, որի գաղափարը ունեցող բժիշկներ կան, ինչպէս օրինակ հոգեկան հիւանդութիւնների բժիշկ Ա. Ա. արտեմովը, որ կամենում էր իւր ծախքով բոլոր կարևոր շէնքերը կառուցանել, եթէ միայն վանքը խոստանար երկու քաղաքների հետ հաղորդակցութեան յարմարութիւն ստեղծել։ Կամ թէ հնարաւոր է որ Խոճեան-Խախլաճեան գիւղատնտեսական դպրոցը այնտեղ բացուի, որի համար ջուրը անհրաժեշտ պայմաններից մէկն է։ Ահա թէ ինչ տեսակէտներով Վ. Կ. կամենում է ձեռնարկել մի այսպիսի գործի։

Ջուրը վեր հանելու կարևորութեան հարցը լուսաբանելուց յետոյ մնում է նաև պարզաբանել հարցի տնտեսական կողմը։ Վ. Կ. այս ձեռնարկութեան համար պահանջուած ծախքը մի տարուայ ընթացքում չի կարող հոգալ, բայց երեք տարուայ ընթացքում դիւրութեամբ կկարողանայ ծածկել, ուստի մտածում է գործ բռնել մեծ ֆիրմաների հետ, որոնք կհամաձայնին նիւթ մատակարարել երեք տարուայ ընթացքում մաս-մաս ստանալու պայմանով։ Բացի սորանից՝ 'ի նկատի առնելով այն հանգամանքը,

որ վանքի մօտի գիւղի բնակիչները Նոր-Նախիջևանի մեշչաններ են, որոնց համար մեծ յարմարութիւն է ստեղծւում և մատակարարւում է ձրի ջուր, Վ. Կ. մտադիր է դիմել բաղաքային դումային և խնդրել, որ ծախսի մի մասը իւր վերայ առնէ, և լիայոյս է որ այս առաջարկը կընդունուի, քանի որ այս առթիւ իւր ծամանակին խոստումներ եղել են իսկ։

Նախահաշուի երկրորդ կէտը, որ կարօտում է լուսաբանութեան՝ քաղաքների և վանքի մէջ հեռախօս անցնելու ծրագիրն է. որ սա մեծ յարմարութիւն է վանքի, գիւղի և ամառը ամարանոց եկողների համար շատ հասկանալի է, բայց առ ժամանակ շռայլութիւն կարող է համարուել, իսկ երբ աղբիւրի ջուրը վեր հանելու և ամարանոցներ բաղմացնելու ծրագիրները ընդունուին՝ ոչ միայն շռայլութիւն չի համարուի, այլ նոյնիսկ անհրաժեշտ կը ճանաչուի։

Վանական Կառավարութիւնը՝ հաշուի և նախահաշուի մասին իւր բացատրութիւնները տալուց յետոյ՝ անհրաժեշտ է համարում բացատրել և այն՝ թէ ինչ վախճան ունեցան 1909 թ. ապրիլի 5-ին գումարուած Պատգամաւորական ընդհանուր ժողովի որոշումները։ Այս առթիւ Վ. Կ. պարտք է համարում յայտնել, որ Պատգամաւորական ժողովի արձանագրութեան պատճէնը իւր բացատրական գրութեամբ անցեալ մայիսի 18-ին ուղարկել էր Թեմիս Գերապատիւ առաջնորդին ի հաստատութիւն, որի պատասխանը ստացուեցաւ 1909 թ. նոյեմբերի 25-ին։ Գերապատիւ Առաջնորդը՝ թ. 549 գրութեամբ Պատգամաւորական ընդհանուր ժողովի որոշումներից մի քանիսը չէր բարեհաճել հաստատել Վ. Կ. կանոնադրութեամբ սահմանուած նպատակից դուրս համարելով այն որոշումները։ Պատգամաւորական ժողովիդ որոշ գաղափար տալու համար մէջ բերենք Սրբազանի գրութեան եզրակացութիւնը բառացի. «ուստի ի նկատի ունենալով բոլոր վերոյգրեալները՝ Մենք յանգեցանք հետագայ եզրակացութեանը և որոշմանը 1) Հաստատել և վաւերացնել պատգամաւորաց ընդհանուր ժողովի որոշումները 10% պահեստի դումարի և 10% նորոգութեան ֆոնդի մասին, նոյնպէս և վանքի անցեալ 1908 թուի եկումտից հաշուի և ներկայ 1909 թուի նախահաշուի նկատմամբ. 2) Թէպէտ և ոչ ըստ կանոնադրութեան, սակայն իբրև բացառութիւն, հաստատել Նոր-Նախիջևանի Թեմական դպրանոցին տալիք նպաստը, համաձայն Վանական Կառավարութեանդ առաջարկութեան, տարեկան հազար երկու հարիւր (1200 ռ.), քանի որ վանքի մէջ դեռ չկայ որ և է կրթական հաստատութիւն և մինչև որ Թեմական դպրանոցի նիւթական միջոցները կբարւոքուին, ըստ որում Թեմական դպրանոցը ամբողջ Թեմի կրթական գործին է ծառայում և ս. Խաչ վանքին էլ ի թիւս այլ եկեղեցեաց կվայելէ օգնութեան հասնել նորա պահպանութեանը և 3) ընդհանուր ժողովի որոշումները Թեմական դպրանոցին 3000 ռուբլի, միւս 4 ծխական դպրոցներին 150-ական ռուբլի և արհեստաւոր-

բաց դպրոցին 1000 ռուբլի նպաստ տալու վերաբերմամբ թողնել առանց հետևանաց ու չհաստատել, վասն զի կանոնադրութեան համաձայն չէ այդպիսի որոշումը։ Հուսկ ապա գովելով բարեջան վանական կառավարութեանդ և պատգամաւորաց ընդհանուր ժողովի ջանքը և վաստակը՝ կյորդորեմ աշխատել պայծառացնել ս. Խաչ վանքը և հոգալ այնտեղ բարենպատակ հաստատութիւններ ստեղծել՝ ի բարոյական օգուտ և ի միխիթարութիւն մեր ժողովրդեան և մնամ աղօթարար վասն Ձեր՝ Առաջնորդ Թեմի Ներսէս արք-եպիսկոպոս»։

II. ՎԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅ ԿԱԶՄԸ.

Վանական Կառավարութեան ներկայ անդրանիկ կազմը հաստատուած է իւր պաշտօնի մէջ Թեմիս Գերապատիւ առաջնորդից 1907 թ. դեկտեմբերի 12-ին եռամեայ ժամանակով և կազմուած հետևեալ անձերից.

1) Տէր Վահան վարդ. Տէր-Գրիգորեան—վանահայր և նախագահ Վան. Կ.
2) Շապոշնիկեան Յովհաննէս—Անդամ Վան. Կառ. և գանձապահ։
3) Սազիրեան Յովակիմ—Անդամ Վան. Կառ. և ժամանակաւոր գանձապ.
4) Դերիջանեան Աբգար—Անդամ Վանական Կառավարութեան
5) Գէորգ սարկաւագ Ձէօրէքչեան—Անդամ Վան. Կառ. և գործավար
6) Խաչատրեան Յովհաննէս—Անձնափոխանորդ
7) Տէր-Գրիգորեան Պօղոս—Անձնափոխանորդ
8) Ալլահվերդեան Մանուկ—Հաշուատես
9) Խամբուրեան Յովակիմ—Հաշուատես
10) Մալխասեան Յովհաննէս—Հաշուատես

Նախագահ Վան. Կառ.՝ *Վահան վարդապետ Տէր-Գրիգորեան.*

Անդամներ՝
Յ. Շապոշնիկեան
Յ. Սազիրեան
Ա. Դերիջանեան

Անդամ-Գործավար՝ *Գէորգ սարկ. Ձէօրէքչեան։*

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ОБЩАЯ СМѢТА

на устройство водоснабженія во владѣніи Армянскаго Крестовоздвиженскаго монастыря.

Наименованіе работъ и матеріаловъ	Сумма. рубли	коп.
Работы первой очереди		
а. Пристройка помѣщенія для насосной станціи	764	93
б. Постройка водонапорной башни . .	4356	32
в. Прокладка напорной магистрали и машинное оборудованіе насосной станціи и водонапорной башни	5672	90
г. Водопроводная сѣть	6226	25
д. Электрическое освѣщеніе . . .	980	—
Итого . . .	18000	40
е. На техничсскій надзоръ и администрацію и на непредвидѣнные расходы 5% съ суммы 18000 руб. 40 коп.	900	02
Всего . . .	18900	42

Наименованіе работъ и матеріаловъ	Сумма рубли	коп.
Работы второй и третьей очередей (до полнаго устройства)		
а) Надстройка водонапорной башни .	1975	90
б) Расширеніе насосной станціи . .	7190	—
в) Водопроводная сѣть второй очереди .	6274	48
г) Водопроводная сѣть третьей очереди .	8439	—
Итого . . .	23879	38
д) На техническій надзоръ и администрацію и на непредвидѣнные расходы 5% съ суммы 23879 руб 38 коп.	1193	97
Всего . . .	25073	35
А всего полное устройство:		
18900 руб. 42 коп. + 25073 руб. 35 коп. =	43973	77

2 апрѣля 1910 г.

Инженеръ **П. Горбачевъ**

Г.Ս.Ս.Հ. Հանրային գրադարան
Ս.Ս.Հ. Պետական Գրադարան
7/XI 1922
Именна. Мясникяна
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
1004/15350

Пояснительная записка

КЪ ПРОЕКТУ ВОДОСНАБЖЕНІЯ

Крестовоздвиженскаго монастыря.

Пояснительная записка

къ проекту водоснабженія Крестовоздвиженскаго монастыря.

Задачей проекта является водоснабженіе, какъ самого монастыря съ площадью двора въ 1½ десятины и населеніемъ 200 человѣкъ, считая и внутреннія дачи, такъ и 1) монастырскаго сада, площадью 9 десятинъ; 2) проектируемыхъ новыхъ дачъ около монастыря съ площадью 6 десятинъ и населеніемъ въ 500 человѣкъ; 3) хутора съ населеніемъ въ 1000 человѣкъ при количествѣ сельскаго скота — крупнаго 500 головъ и мелкаго скота 4000 головъ; 4) чужихъ дачъ на хуторѣ, площадью 3 десятины и населеніемъ 500 человѣкъ, и 5) огородовъ около монастыря съ площадью 10½ десятинъ.

Какъ источникомъ водоснабженія предположено воспользоваться родникомъ, выбивающимся изъ подъ горы около монастыря. Количество притока воды въ немъ не опредѣлялось точнымъ измѣреніемъ, но по полученнымъ свѣдѣніямъ его можно принять въ 80,000 ведеръ въ сутки.

Потребленіе воды принято, согласно даннымъ практики для дачнаго населенія — по 4 ведра на человѣка въ сутки, а для сельскаго населенія —по 3 ведра на человѣка въ сутки, для водопоя скота—4 ведра въ сутки на голову крупнаго скота и 1 ведро на голову мелкаго скота. Кромѣ того, на частую поливку огородовъ, цвѣтниковъ и дворовъ принято—1200 ведеръ на 1 десятину въ сутки и при болѣе рѣдкой поливкѣ сада—по 400 ведеръ на 1 десятину въ сутки.

Что касается наибольшаго часового расхода, то онъ принятъ въ 20% суточнаго, такъ какъ при болѣе правильномъ режимѣ въ сельскихъ мѣстностяхъ, однородныя потребности удовлетворяются болѣе или менѣе одновременно, почему максимумъ потребленія выражается въ болѣе высокой цифрѣ, чѣмъ въ городахъ.

Пожарный расходъ принятъ въ проектѣ въ 25 ведеръ въ минуту или 5 литровъ въ секунду, что соотвѣтствуетъ дѣйствію пожарнаго гидранта на двѣ струи съ отверстіемъ брандспойта 10 м.м. или ½ дюйма.

Такъ какъ полное устройство водоснабженія согласно указаннымъ заданіямъ потребуется не сразу, то въ цѣляхъ экономіи въ затратахъ цѣлесообразнѣе разбить его на очереди и выполнять ихъ постепенно, когда окажется дѣйствительная надобность въ расширеніи водоснабженія. Поэтому въ проектѣ намѣчены три слѣдующихъ очереди.

Первая очередь: водоснабженіе монастыря съ внутренними дачами въ его оградѣ, водоснабженіе монастырскаго сада и устройство разборнаго крана и водопоя для скота для нуждъ хуторскаго населенія. Расходъ воды въ этомъ случаѣ будетъ 12,000 ведеръ въ сутки, или 2,400 ведеръ въ часъ или 8,23 литра въ секунду. Свободный напоръ въ сѣти для хозяйственныхъ и пожарныхъ надобностей принятъ — наименьшій, въ одну атмосферу или 5 сажень водяного столба.

Вторая очередь: водоснабженіе части проектируемыхъ дачъ и водоснабженіе хутора. Расходъ воды для первой и второй очереди вмѣстѣ будетъ 22800 ведеръ въ сутки, или 4560 ведеръ въ часъ или 15,58 литровъ въ секунду.

Третья очередь: водоснабженіе остальной части дачъ и поливка огородовъ. Расходъ воды во всѣхъ трехъ очередяхъ вмѣстѣ, т. е. при полномъ устройствѣ, будетъ 37,300 ведеръ въ сутки, или 7,660 ведеръ въ часъ или 26,18 литра въ секунду. Свободный напоръ въ трубахъ для второй и третьей очереди взятъ средній — 1½ атмосферы или 7½ саженей водяного столба.

Согласно указаннымъ очередямъ устройство водоснабженія выразится въ слѣдующемъ видѣ:

Первая очередь.

Устройство всѣхъ принадлежностей водоснабженія для первой очереди, съ расчетомъ возможности развить его по мѣрѣ надобности для слѣдующихъ очередей, при сохраненіи имѣющихся сооруженій, — будетъ состоять въ слѣдующемъ: 1) Постройка помѣщенія для насосной станціи. Оно проектируется въ видѣ пристройки къ существующему водосборному зданію, размѣромъ въ чистотѣ 2,00×2,33 саж. 2) Установка нефтяного двигателя въ 7 дѣйствительныхъ лошадиныхъ силъ, центробѣжнаго турбиннаго насоса, производительностью 500 литровъ въ минуту или 2,400 ведеръ въ часъ и къ нимъ необходимаго трубопровода со всей арматурой. 3) Постройка водонапорной башни, высотою отъ земли до дна бака 6 саженъ, съ напорнымъ бакомъ въ 3,000 ведеръ съ трубами и съ необходимой арматурой. 4) Прокладка водопроводной сѣти, общей длиной въ 458,00 погонныхъ саженей, изъ трубъ діаметромъ 8, 6, 5, 4, 3 и 2 дюйма, какъ требуется расчетомъ для надобностей настоящей очереди и будущаго полнаго устройства. На сѣти въ нужныхъ мѣстахъ намѣчены сливныя трубы для промывки сѣти и вантузы для выпуска воздуха. Кромѣ того, предположенъ 1 пожарный гидрантъ во дворѣ монастыря съ проходомъ въ 3 дюйма и 6 поливныхъ крановъ съ проходомъ въ 2 дюйма, могущихъ въ извѣстной мѣрѣ служить и для пожарныхъ цѣлей.

Вторая очередь.

Развитіе водоснабженія во второй очереди выразится въ слѣдующихъ добавленіяхъ къ устройству первой очереди: 1) нефтяной двигатель въ 24 силы и соотвѣтствующая трансмиссія; 2) центробѣжный насосъ производительностью 5,850 ведеръ въ часъ или 1,200 литровъ въ минуту; 3) надстройка башни до 10 саженей высоты (считая отъ земли до дна бака) и напорный бакъ на 8,000 ведеръ съ соотвѣтствующимъ трубопроводомъ; 3) развитіе сѣти сначала на части наружныхъ дачъ и на хуторѣ на 411,00 погонныхъ саженей.

Третья очередь.

Дальнѣйшія работы до полнаго проектнаго водоснабженія будутъ состоять только въ продолженіи водопроводной сѣти на дальнія дачи и

въ устройствѣ магистрали для поливки огородовъ, въ общемъ на 610,00 погонныхъ саженей.

Электрическое освѣщеніе.

Принимая во вниманіе, что двигатель для цѣлей водоснабженія работаетъ только днемъ, силой его въ остальное время предположено воспользоваться для освѣщенія монастыря и монастырскаго сада. Для этой цѣли въ помѣщеніи насосной станціи устанавливается динамо-машина постояннаго тока съ напряженіемъ въ *110* вольтъ; само же освѣщеніе монастырскаго двора и сада предположено лампочками накаливанія въ *100* и 50 свѣчей, потому что обыкновенные дуговые фонари въ аллеяхъ будутъ сильно затѣняться листвой деревьевъ, и сила свѣта ихъ будетъ теряться напрасно, арматуры же лампъ накаливанія можно размѣстить чаще и ниже, использовавъ всю силу свѣта. Освѣщеніе внутри помѣщеній предположено *16*-ти свѣчными лампочками накаливанія.

Для первой очереди, принимая во вниманіе силу имѣющагося нефтяного двигателя, возможно поставить динамо-машину мощностью въ 3,6 килоуатта, способную доставить электрическую энергію *10*-ти *100*-свѣчнымъ и *10*-ти 50-свѣчнымъ наружнымъ фонарямъ и 40 лампочкамъ накаливанія въ *16* свѣчей каждая.

Стоимость.

Что касается стоимости водоснабженія, то она опредѣляется смѣтами — для первой очереди работъ въ **18,900 р. 42 к.** съ электрическимъ освѣщеніемъ и для дополнительныхъ работъ второй и третьей очереди въ **25,073 р. 35 к.**, такъ что полное устройство водоснабженія составитъ —**43,973 р. 77 к.**

При этомъ необходимо имѣть въ виду, что при сдачѣ работъ возможно ожидать нѣкоторой скидки и что до приступа къ работамъ нужно сдѣлать подробную нивеллировку мѣстности, и могутъ быть сдѣланы нѣкоторыя уменьшенія діаметровъ трубъ противъ принятыхъ, разсчитанныхъ на самыя неблагопріятныя условія. Наконецъ, самое главное, — въ проектѣ приняты данныя попечительствомъ монастыря заданія относительно количества населенія и района водоснабженія, расчетъ произведенъ на полное удовлетвореніе этихъ потребностей, согласно всѣмъ правиламъ техники. Если же теперь попечительство найдетъ возможнымъ нѣсколько уменьшить основныя заданія и также отказаться отъ противопожарнаго дѣйствія водопроводной сѣти, то это также выразится въ извѣстномъ уменьшеніи строительной стоимости сооруженія, что при наличности готоваго проекта и смѣтъ — нетрудно сдѣлать при осуществленіи устройства, произведя дополнительные расчеты.

При семъ прилагаются чертежи проекта: 1) планъ мѣстности съ указаніемъ сооруженій, 2) продольный профиль главнаго направленія, 3) проектъ пристройки для машиннаго помѣщенія, 4) проектъ водонапорной башни для двухъ очередей постройки и смѣты 1) общая и 2) частная на первую очередь и на дополнительныя работы слѣдующихъ очередей до полнаго устройства.

2 Апрѣля 1910 г.

Инженеръ П. Горбачевъ.

Հ.Ս.Ս.Հ. Հանրային գրադարան
Հ.Ս.Ս.Հ. Публичная Библиотека
7/II. 1922
имени А. Мясникяна
Ա. Մյասնիկյանի անվան

1001

0028025

1000

<< Ազգային գրադարան

NL0028025